736

1. Երբ մեկնես ձեռքդ հզոր՝
Կհանես ինձ խավարից,
Երբ երկարես բազուկդ՝
Կպարտվի իմ թշնամին,
Երբ ինձ հետ է Քո Հոգին,
Սիրտս լցված է անվերջ
Գոհությունով:
    Տե՛ր, կօրհնեմ Քեզ անդադար
    Քո ողորմության համար,
    Իմ անձը պարծենում է
    Քո փառավոր գործերով:
    Օրհնյալ է իմ Աստվածը,
    Որ ազատում է խեղճին
    Նեղությունից:

2. Թող բարձրանա Անունդ,
Ուրախանա իմ հոգին,
Թող փայլի Քո երեսը,
Որ լույսով լցվի հոգիս,
Հովանի և պահապան
Հաստատի՛ր իմ գնացքը
Քո խոսքի մեջ:
    Թող Քո փառքը բարձրանա,
    Եվ ցրվի մեր թշնամին,
    Թող Քո Հոգին մեծարվի
    Եվ գոհություն բարձրանա
    Օրհնյալ է իմ Աստվածը,
    Որ ազատում է խեղճին
    Նեղությունից: